

Սիրելի ընթերցող,

Ասանաւորաբար նախկին աշակերտ ու շրջանաւարտ,

Մեր հերթական ԼՐԱՏՈՒՆ կը դնենք քու տրամադրութեանդ տակ: Պիտի նկատես գործունէութիւններու մեծ քանակը եւ բազմազանութիւնը որ կայ դպրոցէն ներս: Յատկապէս ուրախ ենք, որ Յունուար 2025-ին վերականգնուեցաւ Լիբանանի շրջանաւարտից միութիւնը, եւ արդէն երկու ծրագիր յաջողցուցած է, երրորդ մըն ալ ընթացքի մէջ է:

Լուսահոգի պարոն Զաւէն Իսանճեան՝ Աւետարանչականի նախկին տնօրէնը, մեր դպրոցի առանձնայատկութիւնը նկատած էր շրջանաւարտներու ջերմ վերաբերմունքը դպրոցին հանդէպ: Եւ իրաւամբ ալ այդպէս է: Քիչ չէ թիւը անոնց, որոնք նիւթապէս կանոնաւորաբար կամ պարբերականօրէն կ'աջակցին մեզի: Երախտապարտ ենք:

Սիրելի հայսքուցիներ,

Վահան Թէքէեանի մէկ յուզիչ բանաստեղծութեան մէջ այսպիսի տող մը կայ. «Յիշեցէք երբեմն այն հոգին, որ դողաց վասն ձեր եւ բազմաց»: Եկէք միշտ ջերմ պահենք մեր կապը իրարու հետ: Ձեր մէկ բարեւը, մէկ հեռաձայնը, մէկ այցելութիւնը բաւարար է, որ զգանք, թէ մեր սիրելիները մեզի հետ են, դպրոցին նեցուկ են, չեն մոռցած...: Սա շնոյն կարեւոր է շարունակելու ձեր եւ մեր սիրած դպրոցին առաքելութիւնը:

Հպարտ ենք ձեզմով:


Առողջ, ուրախ եւ հանգիստ եղէք:

*Ա. Իսրայէլ*



### ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻՑ ՄԻՈՒԹԻՒՆ BRUNCH

29 Մարտին Աշրաֆիէի Ni Café-ին մէջ 50-է աւելի շրջանաւարտներ իրարու հետ տեսակցելու եւ միասնաբար հաճելի ժամանակ մը անցընելու լաւ առիթ ունեցան: Ողջոյնի խօսքեր ուղղեցին աստեալատուի օրդ. Հուրի Քեստենեանը, տնօրէնն ու պատուակալ տնօրէնը:



## ▶ Անտրիա Տեմիրճեանի ելոյթը

Կիրակի, 29 Դեկտեմբերին ՀԱԳ-ի 11-րդ դասարանի շնորհալի աշակերտուհի Անտրիա Տեմիրճեան որպէս Ա. ջութակ ելոյթ ունեցաւ Լիբանանի ազգային երաժշտանոցի մանկական լարային նուագախումբին հետ, ղեկավարութեամբ Պարոյր Թէքեանի: Համերգը տեղի ունեցաւ Հայ աւետ. Ա. եկեղեցիին մէջ: Անտրիան հրաշալի մենակատարումով հանդէս եկաւ նուագելով Օսկար Ռիտինկի Violin Concerto B minor Op. 35-ը, որ արժանացաւ ներկաներուն ջերմ գնահատանքին:

## ▶ Թերուանտո

Արդէն երկրորդ տարին է, որ ՀԱԳ-ի աշակերտներէն ոմանք Թերուանտոյի մարզումներու կը հետեւին դպրոցին մէջ School of Champions-ի կազմակերպութեամբ եւ մասթըր Նարեկ Պուլտուքեանի առաջնորդութեամբ: 29 Դեկտեմբերին անոնցմէ ոմանք մասնակցեցան ՀԲԸՄ Տեմիրճեան կեդրոնին մէջ կայացած մարզումներուն, որ հիմնաւի հնարատրութիւն ընձեռեց զարգացնելու իրենց հմտութիւնները, զարգացնելու ինքնավստահութիւնը եւ պատրաստուելու յառաջիկայ մրցումներուն:

## ▶ «Ո՛վ է հայը»

31 Յունուարի ատենամարզանքին, 2020-ի շրջանաւարտ Անթօնի Օպէյտ խօսեցաւ հայ մշակոյթը եւ արմատները պահպանելու ու պաշտպանելու կարեւորութեան մասին: Անոր խօսքերը յիշեցում էին, թէ մեր մշակոյթը կ'ապրի, երբ իւրաքանչիւր սերունդ ստանձնէ զայն պահպանելու պատասխանատւութիւնը:

## ▶ Հայաատանի ամերիկեան համալսարան

Փետրուար 6-ին մեզի հետ էր Հայաատանի ամերիկեան համալսարանի ընդունելութեան բաժինի տնօրէն օրդ. Մեղրի Խօշեանը (2004-ի շրջ.): Ան ներկայացուց ՀԱՀ-ի մասնագիտութիւնները, կրթաթոշակները եւ կրթական ծրագիրները:

## ▶ Վարդանանց եւ Բուն Բարեկենդան

Փետրուար 28-ին նշեցինք Սրբոց Վարդանանց տօնը, որուն մեր աշակերտները մասնակցեցան արտասանութեամբ ու երգերով: Ուրախ էինք հիւրընկալելու հոգշ. տ. Ազատ արդ. Ֆիլիկեանը, որ խօսեցաւ Վարդանանցի իմաստին մասին, առնչելով այն մեր այօսրուան՝ ազգային եւ կրօնական ինքութեան մարտահրաւերներուն: Վարդանանցի յիշատակումէն ետք, աշակերտները ուրախութեամբ նշեցին Բուն Բարեկենդանը: Աշակերտական խորհուրդը պատրաստած էր քերմէսի խաղեր եւ ուտելիքներ: Միջնակարգի աշակերտները ներկայացուցին կարճ զաւեշտներ՝ իրենց ծպտումի տարազներուն թեմայով: Օրը լեցուն էր ուրախութեամբ ու ծիծաղով:





## ► Ֆրանսոֆոնի շաբաթ

Նախաձեռնությամբ եւ կազմակերպությամբ ՀԱԳ-ի ֆրանսերէնի ուսուցչուհի տիկ. Լենա Միլլէրեանի, ամբողջ շաբաթ մը դպրոցին մէջ կը տիրէր ֆրանսական մթնոլորտ՝ երաժշտությամբ, ճաշով ու ըմպելիքներով, զարդերով ու այլ յարդարանքներով: Շաբաթը ամփոփուեցաւ Ֆրանսայի ու ֆրանսերէնի մասին ընդհ. զարգ. մրցանքով:

## ► Երկրորդ ընդհ. Ծնողական ժողով

14 Մարտին տեղի ունեցաւ Ա. – 12-րդ դասարաններու ծնողական ժողովը, մեծաթիւ ծնողներու ներկայությամբ: Ուսուցիչներու հետ անհատական հանդիպումներէն առաջ ծնողք առիթ ունեցան ունկընդրելու Տիկին Լենա Պաղտոյեանի դասախօսութիւնը «դրական կարգապահութիւնը» նիւթով, որմէ ետք դպրոցի համալսարանական արեւելումի եւ մասնագիտական կողմնորոշումի խորհրդատու պրն. Էլի Հասսուն ծնողներուն ներկայացուց այդ ուղղությամբ երկրորդական բաժինի աշակերտներուն հետ կատարուող աշխատանքները:

## ► Գարակէօզեան ընկերակցութեան այցելութիւն

26 Մարտին հաճոյքը ունեցանք հիւրընկալելու Գարակէօզեան ընկերակցութեան տնօրէնուհի տիկ. Իրինա Լազարեանը եւ Լիբանանի բաժնի տնօրէն պր. Սերոբ Օհանեանը, ընկերակցութեամբ տիկ. Ժանին Դանիէլեանի եւ տիկ. Քրիստին Սիմիթեանի: Նոյն օրը Գարակէօզեանի բժիշկները աշակերտները ենթարկեցին ընդհանուր բժշկական քննութեան:

## ► Ողջերթի հաւաք

27 Մարտին ՀԱԳ անձնակազմը եւ Տիկնանց օժանդակ մարմինը ողջերթ մաղթեցին Կարօ եւ Յասմիկ Աւետեաններուն, որոնք տարբեր ձեւերով գործակցած են դպրոցին հետ: Աւետեանները իրենց կեանքի նոր փուլը պիտի շարունակեն Միացեալ Նահանգներու մէջ: Յաջորդ օրը աշակերտներ, դասարանային հաւաքներով հրաժեշտ տուին իրենց դասընկերներ Վարդանին (10-րդ), Վահանին (8-րդ) եւ Մհերին (Ա.):

## ► Գարուն

Մարտ 28-ին ՀԱԳ-ի ամբողջ շրջապատը գարնանային տրամադրությամբ լեցուն էր: Օրը սկսաւ յատուկ պաշտամունքով, ապա մանկապարտէզի ու նախակրթարանի աշակերտները երգով, պարով ու թատրոնով գեղարուեստական ելոյթներ ներկայացուցին: Զանազան բնոյթի ձեռնային աշխատանքներ, խաղեր, ճոխ նուագ ու փիքնիք՝ հաճելի տրամադրութիւն ստեղծեցին դպրոցին մէջ:






ԼՍԳ-ի երկարամյա նախկին աշակերտ դոկտ. Նուպար Աֆեան, նախքան ԱՄՆ-ի նախագահ Ջո Դայտրնի պաշտոնավարության ավարտը, Սպիտակ Տան մեջ 3 Յունուար 2025-ին պատուում ԱՄՆ-ի Technology and Innovation շքանշանով՝ Ամերիկայի արձանագրած յաջողություններուն համար:



Հանգուցեալ Լենա Եարտըմեանի (ծն. Գասարճեան, 1959-ի շրջ.) հարազատներուն նուիրատուութեամբ Հայ աւետ. կեդր. բարձ. վարժարանը օժտուեցաւ արդիական նոր գրադարանով մը, որ կոչուեցաւ իր անունով: Բացումը տեղի ունեցաւ 29 Դեկտեմբեր 2024-ին: Տնօրէնուհին իր խօսքին մէջ շնորհակալութիւն յայտնեց ի միջի այլոց Եղիկ Թորոսեանին (1985-ի շրջ.) որ վերահսկած էր նորոգութեան աշխատանքներուն և ԿԲՎ-ի ուսուցչուհի օրդ. Ռինա Չոլաքեանին (ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտուհի) գիրքերու ընտրութեան և տեղադրման իր մասնակցութեան համար:



ԼՍԳ-ի նախկին աշակերտ Սինան Սինանեան, ՀԲԸՄ-ի Հոգաբարձական խորհուրդի անդամ նշանակուած է 12 Հոկտեմբեր 2024-ին, ՀԲԸՄ-ի Ընդհանուր ժողովի ընթացքին:



Ամերիկայի հայ աւետ. ընկերակցութեան 105-րդ ճաշկերոյթին, որ տեղի ունեցաւ 19 Հոկտեմբեր 2024-ին Մոնրէալի մէջ, հանդիսավարները եղած են տէր և տիկ. Ռաֆֆի (1990-ի շրջ.) և Արփի Շսօրօքեան:



«Լարք» երաժշտական ընկերակցութեան (տնօրէն Վաչէ Պարսումեան – 1971-ի շրջ.) Դիլիջան սենեկային երաժշտութեան համերգաշարի երկրորդ համերգը տեղի ունեցաւ 8 Դեկտեմբեր 2024-ին:



Ըստ Ասպարէզ օրաթերթին, Վենետիկի 19-րդ միջազգային պիէնալիի հայկական տաղաւարին curator նշանակուած է տիկ. Թինա Շաքարեան (1978-ի շրջ.): Ցուցահանդէսը պիտի տնէ Մայիս 10-էն 23 Նոյեմբեր 2025:




Յունաստանի հայ աւետարանական համայնքի պետ վեր. Վիգէն Չոլաքեան (1980-ի շրջ.) Յունաստանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ և լիազօր դեսպան Տիգրան Մկրտչեանին հետ տեսակցեցաւ է դեսպանատան մէջ:

Աթէնքի Հայ աւետ. եկեղեցւոյ տիկնանց մարմինի հիմնադիրներէն է վարչութեան այժմու աւետարանական տիկ. Սիլվա Ներսէսեանը (ծն. Պոյաճեան, 1967-ի շրջ.):



23 Նոյեմբեր 2024-ին Քրիստոնէական ջանից ընկերակցութեան տարեկան պատգամատրական ժողովին, օրդ. Մարինէ Շէիքեան (2014-ի շրջ.) երեք տարուայ ժամկետով ՔԶԸ գործադիր մարմինի անդամ ընտրուած է:



28 Փետրուար 2025-ին Պուրճ Համուտի Յովհ. Պօղոսեան հանդիսասարահին մէջ կայացաւ ողբ. Սարգիս Նաճարեանի քառասունքի ոգեկոչումի ձեռնարկին գլխաւոր բանախօսն էր Արարատ օրաթերթի տնօրէն պրն. Նազօ Ճերեճեանը (ՀԱԳ-ի Բ. Պարքի նախկին աշակերտ):



Երեւանի մէջ կայացած ՀՅԴ 35-րդ ընդհանուր ժողովին բիրոյի անդամ ընտրուած է Լոսանճելոսաքնակ Տարօն Տէր Խաչատուրեանը (1978-ի շրջ.):




14 Մարտ 2025-ին, կազմակերպությամբ ՀԲԸՄ-ի և Լիբանանի ազգ. երաժշտանոցին և սերտ գործակցությամբ Պեղհիքայի, Գանատայի, Զուիցերիոյ և Հայաստանի դեսպանությանց, Լիբանանի ֆիլարմոնիք նուագախումբը, խմբավարությամբ Մաէսթրո Կարո Ալեսեանի (1998-ի շրջ.), համերգ մը տուած է ֆրանքոֆոն երկիրներէ յօրինողներու գործերով:

### ԲԱԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Տիկ. Ալին Սաֆարեան (ծն. Քէշիշեան, 2005-ի շրջ.) և ամուսինը 15 Նոյեմբեր 2024-ին բախարատորուած են առջինէկ մանչով մը՝ Ալեքո, Սթաֆըրորի (ԱՄՆ) մէջ:

### ԻՐԵՆՑ ՅԱԿԻՏԵՆԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՏԸ ՄՏԱՆ...

† 1954-ի շրջանաւարտ ճարտարապետ Միքայէլ Աշճեան (ծն. 1931), 14 Մարտ 2025-ին մահացած է Ազունիէի բուժարանին մէջ՝ յառաջացեալ տարիքին:



† 1966-ի շրջանաւարտ և ՀԱԳ-ի 1967 – 1974 տարիներու մանկապարտէզի մնայուն ուսուցչուհի տիկ. Վիրճինիա Պաղտատեան (ծն. Թուզճեան 1949-ին) մահացած է 23 Փետրուար 2025-ին, Պէյրութի մէջ:



† 1954-ի շրջանաւարտ Լեւոն Ղոչախեան (ծն. 1934) անակնկալօրէն մահացած է 9 Փետրուար 2025-ին, Պէյրութի մէջ՝ յառաջացեալ տարիքին:



† ՀԱԳ-ի Հոգևոր կեանքի յանձնախումբի անդամ (1985 – 1988) տիկ. Ռեքերա Գարճեան (ծն. 1931) Միդիայի (ԱՄՆ) մէջ մահացած է 13 Սեպտեմբեր 2024-ին: Ան այրին էր վեր. Յովհաննէս Գարճեանի:

† 1958 – 1961 տարիներու նախկին աշակերտ Ռուբէն Մերտինեան (ծն. 1945) մահացած է Դեկտեմբեր 2024-ի վերջերը, Պէյրութի մէջ:

### ՃՇԳՈՒՄ

Լրարուի նախորդ թիւին մէջ նշուած Գրիգոր Թերզեանը մահացած է 2023-ին, ոչ՝ 2024-ին:



Չաւէն Մսըրլեան

Սամի Ատիամ



Հերմինէ Խաթունեան

Իպրահիմ Սիտանի



Անի Աղպաշեան

Մաքո Ունճեան

### Այցելելուրթին Նախկին ուսուցիչներու

Մարտ 7-ին եւ 8-ին, ՀԱԳ-ի Շրջանաւարտից միութիւնը մեծ պատիւ ունեցաւ այցելելու նախկին ուսուցիչներու, որոնք տասնամեակէ աւելի ՀԱԳ-ի մէջ իրենց կեանքէն նուիրած են սերունդներ կրթելու եւ դաստիարակելու: Յուզիչ էր տեսնել անոնց ժպիտը, լսել իրենց յուշերը եւ անձամբ երախտագիտութիւն յայտնելու անոնց:



Վազգէն Բիւզանդեան

Լորիս Տօնապետեան



Մուսթաֆա Թասսի

Գարինա Ալեքսանտրեան



Ժամալ Ռաշիտի

Կարինէ Աճեմեան

ԱՆՓՈՍ

Մագերենի դաս  
հանրային պարտեզին մեջ



Արեւագալի արարողութիւն՝  
Ս. Լեւոն մայր եկեղեցի



Պատերազմի  
տար մրցաշարը



Ղեկուկ Մարտիրոսի  
ծանօթացում



Ֆրանսերէնով գնում  
marché de fruits



Բանավեճ տարբեր  
սիրերով



Տարրալուծարանի  
փորձարկումներ



«Ազատութիւն» ֆիլմի  
ակնորութիւն



Կրկեսային ցուցադրութիւն



Կիւսմեայ քննութիւններ



Ղոտոյտ դէպի  
Մար Շա'այա



Համալսարանական արեւելյան և արեւմտյան աշխարհային օրերի փոխանակումը



NDU, BALAMAND, HAIGAZIAN, BAU, LAU, AOU, AUST, AUA

ՀԱԳ-ի աշակերտուհիները կը տօնէ Ջառիկը



## ՆՈՒՐԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՐԱՏՈՒ-ի նախորդ թիվն ի վեր շնորհակալությամբ ստացուած են հետեւեալ նուիրատուութիւնները:  
Բոլոր գումարները կանխիկ տոլարով են, բացի եթէ նշուած է այլապէս:

### «ՀԲԸՄ-ի ՉԱԻԷՆ ՄՍԸՐԼԵԱՆ ՄՐՑԱՆԱԿ»

2500

Պատուակալ Տնօրէնին փափաքով, գումարը յատկացուած է դպրոցի կրթանպաստի ֆոնտին

### ԱՄԱԱ-ԷՆ

|                                         |        |
|-----------------------------------------|--------|
| 2023-24-ի Ա. եռամսեակի Endowment ֆոնտին | 15.357 |
| Կրթաթոշակի յատկացում Բ. եռամսեակ        | 7475   |
| Բ. եռամսեակի անմիջական օժանդակութիւն    | 3578   |
| Բ. եռամսեակի դպրոցներու օժանդակութիւն   | 4473   |

### ԱՄԱԱ-ի ՄԻՋՈՑԱԲ ՊԱՏՈՒԱԿԱԼ ՏՆՕՐԵՆԻ ԿՈՉԻՆ ԸՆԴԱՌԱՋԵԼՈՎ

|                                           |        |
|-------------------------------------------|--------|
| Տէր եւ տիկ. Տէյվիտ եւ Մարկարէթ Սկրուպլեան | 10.000 |
| Շրջանաւարտ տոքթ. Արմէն Կեօնճեան           | 2000   |
| Շրջանաւարտ տոքթ. Հրաչ Սվաճեան             | 1500   |
| Շրջանաւարտ Յարութ Մեսրոպեան               | 500    |

### ԱՄԱԱ-ի ՄԻՋՈՑԱԲ

|                                                                               |     |
|-------------------------------------------------------------------------------|-----|
| Տոքթ. եւ տոքթ. Նազարէթ եւ Անի Տարագճեաններ<br>ողբ. Տոնալտ Պապիկեանի յիշատակին | 200 |
| Տէր եւ տիկ. Աբրահամ եւ Մարի Աղոյեան                                           | 50  |

### LEBANESE LADIES CULTURAL SOCIETY

7400

Այս յատկացումին մեծ մասը շրջանաւարտ օրդ. Մարի-Լուիզ Մենէշեանի կողմէ է

|                                       |      |
|---------------------------------------|------|
| Տիկ. Վելմա Հերմէզ (տարեկան յատկացում) | 3000 |
|---------------------------------------|------|

### ԱՐԱ ՊԱԼԵԱՆ ԿՐԹԱԿԱԼ ՖՈՆՏԻՆ Արա Պալեանի մահուան յիշատակին

|                                            |     |
|--------------------------------------------|-----|
| Տիկ. Սօսի Պալեան                           | 150 |
| Տիար Արմէն Պալեան                          | 150 |
| Տօքթ. Արման եւ դոկտ. Արաքս Գրիգորեան       | 100 |
| Տիար Ալեք եւ դոկտ. Շողակ Պալեան            | 100 |
| Օրդ.ք Արշակունիի եւ Լուսին Տէր Խաչատուրեան | 100 |

### Հայաստան համահայկական հիմնադրամ Ուսուցիչներու օժանդակութիւն

4513

|                                          |    |
|------------------------------------------|----|
| Դոկտ. եւ տիկին Արմէն Իւրնէշլեան          | 30 |
| Վերժին Չերչեան-Աբրահամեանի մահուան առթիւ |    |

Խմբագիր՝ Տնօրէն Պոպ. Արմէն Իւրնէժլեան  
Խորհրդատուներ՝ Տիար Ներսէս Պաշոյեան  
Տիար Յակոբ Տէմիրճեան  
Էջադրում՝ Անի Բենսեմեան Պալեան  
Մ.Ա.Յ.Ա.Ե. Միութեան Հիմնադրամի Գրասենեակ

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE

P.O. Box 3672-Beirut

Tel: 01 349 816 Fax: 01 751 469

E-mail: A\_E\_C@cyberia.net.lb

Website: aecbeirut.edu.lb

Facebook: Armenian Evangelical College